



Հայաստանում և նրա սահմաններից դուրս հանրության լայն շրջանակների ուշադրությունը գրաված «Ականատեսը» հատուկ նախագիծը կարճատև դադարից հետո վերսկսում է իր ընթացքը՝ այս անգամ ներկայանալով հավատարիմ ընթերցողին Հայոց ցեղասպանության՝ Հայաստանի տարածքում բնակվող վերջին ականատես-վերապրողների պատմություններով:

Նախագծի հերոսուհին 1915 թվականին Կարսում ծնված Մարգարիտ Մխիթարյանն է: Նա, ինչպես ինքն է բնորոշում, Կարսի կողքի գյուղից է, որի անունը չի հիշում: Ջարդերը սկսվելուն պես ծնողները վերցնում են նրան և եղբորը՝ գաղթելով Արևելյան Հայաստան: Մարգարիտն այդ ժամանակ ընդամենը մի քանի ամսական էր, եղբայրը երեք տարեկան՝ «բաց գույնի մազերով»: Նա մորից է լսել, որ եղբոր շեկ լինելու պատճառով դեմքին մուր են քսել, որ թուրքերը չտանեն իրենց հետ: Կարսից պատմության հերոսուհու վերհուշը հարուստ չէ: Հիշողության մեջ դաջվել է տեղի ժողովրդի շրջանում հայտնի, իրեն էլ մորից փոխանցված աղոթք, որն առ այսօր հիշում է:

...Ճրագ, ճրագ, ճշմարիտ, ճշմարիտստիկ Մարտիրոս,

Իմ սիրելի Քրիստոս, Քրիստոս հեծավ ձին ու ջորին,

Գնաց արդար վեր քաղաք,

Բերեց լուսեղեն պսակ:

Տունը կար՝ երկաթ էր,

Բոլորը վեր պողպատ էր:

Սուրբ Հռիփսիմեն քնած էր,

Սուրբ Կարապետն արթուն էր,

Մասիսը վեր պռնկին էր,

Քաջ գավազան դռան փակ էր,

Թագա հացի հոտն ընկավ,

Հելեք, տեսեք՝ ով եկավ ...

«Կարսն իրենց համար դրախտային երկր է եղել: Իրենք շատ լավ են ապրել այնտեղ, հարուստ են եղել», - պատմում է հերոսուհու աղջիկը՝ Գայանեն: Նրա խոսքով՝ մայրը, թեև կրթություն չի ստացել, սակայն հմուտ դերձակ է: Հագուստ, թե կարպետ նա կարողացել է վարպետորեն պատրաստել: «Մարդուն մեկ հայացք նետելը բավական էր, որ կարողանար նրան համապատասխան հագուստ կարել», - հավաստիացնում է դուստրը: Նրա խոսքով՝ ինչպես շատ գաղթականների, այնպես էլ իր մոր անցած ուղին դժվարություններով լեցուն է եղել:

Կարս (նաև՝ Ղարս), քաղաք Թուրքիայի Հանրապետության արևելյան մասում՝ պատմական Արևմտյան Հայաստանում, Կարսի նահանգի մայրաքաղաքն է: 1918 թ-ի ապրիլի 25-ին Անդրկովկասյան սեյմը լավ զինված կայազոր ունեցող Կարսն առանց կռվի հանձնել է թուրքերին. 1919 թ-ի մայիսին քաղաքն անցել է Հայաստանի առաջին հանրապետությանը (1918–20 թթ.): Կարճ ժամանակամիջոցում վերադարձել են բազմաթիվ հայեր, սակայն 1920 թ-ի հոկտեմբերի 30-ին քեմալական զորքերը, կրկին առանց դիմադրության, գրավել են Կարսը եւ կոտորել 8 հազար հայի: 1921 թ-ի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Կարսը հանձնվել է Թուրքիային: Ներկայումս Կարսը ունի 54 հազ. բնակիչ: Նա մնացել է գավառական հետամնաց քաղաք և իր տնտեսությամբ ու մշակույթով, և արտաքին տեսքով: Կարսի պատմաճարտարապետական հուշարձաններից ամենաարժեքավորը Մայր եկեղեցին է (X դար): Կարսում են ծնվել հայ մշակույթի ու գիտության մի շարք երախտավորներ, այդ թվում՝ բանաստեղծ Եղիշե Չարենցը:

Նախագծի ստեղծագործական խումբը Մարգարիտ Մխիթարյանի պատմությունը հավաքագրել է մայիսին: Հենց այս ժամանակահատվածը ցեղասպանության ականատեսն ասոցացնում է իր ծննդյան հետ: «Տատիկս իր ծննդյան օրն ու ամիսը հստակ չգիտի, ասում է ծնվել եմ մայիսի վերջին՝ ծաղկունքին», - ասում է Մարգարիտի թոռնիկը՝ Մարիամը: Նա բնակվում է Մոսկվայում, բայց երբեք առիթը բաց չի թողնում տարվա ընթացքում գոնե մեկ անգամ Երևան գալու՝ տատիկին տեսնելու համար:

«Ամեն անգամ, երբ գալիս եմ, ասում եմ գոնե այս անգամ էլ տեսնեմ տատիկիս», - անկեղծանում է թոռնուհին, ով տատիկին բնութագրում է որպես ուժեղ, խելացի և բարի կին: Մարգարիտն ունի ութ երեխա: Նրանցից հինգն են այժմ կենդանի: Ամուսինն արմատներով Վանից է եղել: Ականատեսն օրվա մեծ մասն անցկացնում է անկողնում: Մտածկոտ հայացքով է նայում դիմացինին, տարիքը չմատնող գեղեցիկ ձեռքերը նրբորեն գլխի տակ դրած: Ծերունական տարբեր խնդիրներ ունեցող, բայց իր տարիքի համեմատ ֆիզիկապես առողջ կինը 2015 թ. գարնանը կդառնա 100 տարեկան: Նա մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայի տարածքում տեղի ունեցած ոճրագործության հասակակիցն է:

Մարգարիտ Մխիթարյանի հետ մեզ չէր հաջողվել կապ հաստատել իր բնակության վայրի՝ փողոցի (Կորենական-Աղանա) անվանափոխության պատճառով: Ականատեսին գտնելու հարցում մեզ աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Ռուզաննա Զաքարյանին:

Հեղինակ՝ Տաթևիկ Գրիգորյան